

ընդհակառակն՝ առջեկի կողմը, խիստ բազմաթիւ : ՚ այնպէս է նաև Արանկութանկինը : — ՚ հա առաջին աստիշան մը ստորնականութեան :

՚ ակոթ ըսուած կապկին ըղեղին ուռոյցները գեռ ալ պակաս են . որով չետեապէս՝ նոր աստիշան մ' ալ ստորնականութեան

՚ ստարերութիւնները կրնանք ասանկ բացատրել ուռոյցքներուն նայելով .

Մարդ . . . . .	Ա աստիշան
Կապկաց . . .	Ա . ցեղը Բ . . .
Կապկաց . . .	Բ . ցեղը Գ . . .
Սաժու ըսուած	կապկիը . Դ . . .

Կապկաց մէջ որչափ որ վար իջնանք, ամեննեին ըղեղին վրայ երեցած խորտուքորտ տեղուանքը չենք գտներ . ինչպէս նաև իրենց չորրորդ ցեղին վրայ որ են ուիսթիթինները՝ աս ըսած խորտուքորդութիւնները ամեննեին չեն տեսնուիր :

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դիենով մը ուրիշի տունը կ'երրայ բնակալու :

՚ նծի շատ աղուոր բան մը կ'երեայ, որ երթոր մէկը ձամբուն վրայ յոգնած ըլլայ, կամ կամք չունենայ առաջ երթալու, կամ գիշերը վրան համնի, չստիպուի ինչուան իր տունը երթալու . Հասպա ամէն տուն հասարակաց ըլլար : — ՚ ՚ ՚, պիտի ըսէ մէկը, դուն կրնաս զիննետուն մը կամ իջւան մը երթալ : — ՚ պաւ է, բայց հոն պէտք է վճարել : ՚ բրդեօք աւելի աղեկ սովորութիւն մը չեր ըլլար, որ ես տան մը վարձք վճարելով, այն տունը ուրիշի մ'ալ ծառայելը, և ուրիշի մը վճարած տունը ինծի ալ ծառայելը, ինչպէս որ դիպուածը բերելը, կամ պէտք ըլլար գործողութեանց համար, որ այսօր այս փողոցին մէջ, վաղը մէկալին մէջ կը հանդիպին : ՚ յս մտածմունքն ունեցայ՝ երթոր լըսեցի ՚ Վիրակի իրիկուն պարզամիտ

մարդու մը ըրածը . որ գիշեր ատեն գլուխը ծանրացած գինւոյն ծխովը և քնով, առնետի մը պէս ձեռքերով պատերը չօշափելով կ'երթար, այն ձեռով քալելով՝ ինչ ձեռով որ կայծակները կը նկարեն : ՚ լըտեսնայ, կամ թէ կը զգայ չօշափմամբ՝ բաց դուռ մը, ներս կը մտնայ, և ինչպէս որ կրնայ սանդուխեն վեր կ'ելլայ, կ'երթար սենեակ մը, կը գտնայ անկողին մը, և առանց նայելու թէ իրենն է թէ չէ, կը հանուի, և կը մտնայ սաւաններուն մէջ, և կ'ըսի խոկալով քնանալ : ՚ ակայն խաթուն մը կար նոյն տանը մէջ որ երկու տղոցը ընթրիք տալէն վերջը, ՚ քրագը աւած, և պատուիրելով որդւոցը որ գիշերը խելք կենան, կ'երթար կամաց կամաց զիրենք անկողին գնելու այն սենեկին մէջ, ուր անկասկած կը քնանար պառկած մարդը : ՚ ինկան ներս մտնալը, անկողինը բանուած սեսնալը, և ձայն մը ձգելով տղաքը աւնուլ ու դուրս ելլան մէկ կ'ըլլայ : ՚ էկէն կ'երթայ պատուհանը, մարդ կը կանչէ օգնութեան, տղաքը յուսահատեալ կուլան : — ՚ պացիք՝ ինչ կայ, ինչ եղերէ, կը կանչեն : — ՚ ուտ զէնք, սուր : ՚ քրացան : ՚ վազեն կնկան դուռը, բազմութք սանդուխներէն վեր կ'ելլան, և սրահը հասնելով կը լսեն թէ սենեկին մէջ մարդ կայ . կը մտածեն թէ ով առաջ երթայ : ՚ երջապէս երկու հոգի կամաց կամաց գլուխնին ներս կը խոթեն, և տեսնելով որ թշնամին կը քնանայ, կը մօտենան և կը պուան : ՚ իմայ զքեզ կը սպաննենք . — անիկայ պատասխանի տեղ կը խոկայ : ՚ յս ատենը ամէնքը մէկ տեղ մեծ աղմուկ մը կ'ընեն որ արթնցընեն : ՚ այց ան ալ բանի չիգար . անիկայ կը շարունակէ քնանալը : ՚ յս ատենը մէկը ձեռքերէն կը բռնէ, մէկը թէ երեն, մէկը ասղին կը քաշէ, մէկալը անդին . անիկայ քիչ մը կը խոկայ, քիչ մը կը յօրանջէ, բայց աչքերը դոց են : ՚ յս ատեն կը համնի տանտերը, և հոն գտնելով բազմութիւնը և իմաննալով պատճառը՝ զոր գրեթէ ամէնքը մէկ բերան իրեն ըսին

կը մօտենայ անկողնոյն և կը ձանջնայ գինովը : Ինքը գիտէր անոր սովորութիւնը , և կ'ըսէ . Դիուք կը կարծէք թէ ոսկորէ և մսէ մարդ մըն է ասիկայ . բայց գիտնաք որ տակառի կողերէ և շրջանակներէ շինուած է . վերուցէք կ'աղաւեմասկէ , և անկողինս ինծի թողուցէք : — Ի՞նչ ընէնք , ուր տանինք կ'ըսէն դրացիները : — Ի՞ակը ամբարանոցի մը մէջ , կ'ըսէ , տանտէրը : Ուստի կը զնէն հման խշտեկ մը և չորս հոգի ուժովներէն և կտրիձներէն , ուրիշ հինգ կամ վեց հոգւոյ օգնութեամբ կ'առնուն քնացողը , և պարկի մը պէս կ'իջեցընեն վար , և կը պառկեցընեն ուր որ պէտք էր , չի կարենալով որոշել թէ անկողինը ի՞նքն էր չէ նէ ի՞նքը անկողին . որովհետև երկուքն ալ նոյնպէս անշարժ էին : Ծափաղելով դուռը կէս կը գոցէն , և ամէն մարդ իր բանին կ'երթայ : Կ'երթան քնանալու . կը լուսնայ , և երկրորդ օրը ցորեկ կ'ըլլայ , դեռ անիկայ աչքը չէ բացած : Ա երջապէս երթոր Կ'ստուած կ'ուզէ , կ'արթըն-

նայ և չի գիտեր ուր ըլլալը : Ի՞այց տանտէրը որ զինքը կը ձանջնար , ինտալով կ'իմացընէ իրեն հանդիպածը . և կը հարցընէ թէ ի՞նչպէս ըրել է այս բանը , պատասխան կուտայ թէ այն տունը իրենը կարծեր էր , և թէ հման գտնելով դուռ մը , սանդուխ մը , սենեակ մը , անկողին մը ի՞նչպէս իր տանը մէջ , արժանի էր արդարանալու :

Արթաներուն պատմութեան մէջ կը կարդացուի , որ երկու գինեմոլ քնանալուն վերջը , կ'արթըննան երկրորդ օրը արեւը մոննելու ատենը : Կ'ըսէ մէկը մէկալին . Արթեմ թէ ատենը ուշէ , գնա պատուհան մը բաց . ընկերը կ'երթայ , կը բանայ , և կ'ըսէ , Դեռ լոյն չիտեսնուիր : Եւ իրաւունք ուներ , վասն զի փոխանակ պատուհանի՝ մնտուկ մը բացեր էր : Ալ գառնան քնանալու օրուան մնացած կտորը և բոլոր գիշերը , և մեծ մաս մը երրորդ օրուան ալ :

ԿՈՆ-ԾԱ-Կ

## Ժ Ա. Մ Ա Ն Ա. Կ Ա Կ Ի Ց Ք

Արեւելեան վերջին խնդիրն ու պատերազմը : ( Տես երես 429 )

### Յ Ֆ Ֆ Ա

### Յ Ո Ւ Ն Ի Ս

29. Կ'ստելուտ կոմը հետեւալ պաշտօնագիրը կը խրկէ առ կորչագով իշխանը , պատուիրակ Ռուսաստանի ի Վեհեննա . Աւստրիական դահլիճը կը բանագատէ զիուսաստան ( Տես 3 ) հիմակուան քաղաքական վտանգին վերը մը տալու պարագելով Դաննուբեան իշխանութիւնները որշափ կարելի է շրւտ միջոցի մէջ , և իր այս փափաքը Աւստրիոյ ու Գերմանիոյ օգուտէն պատճառած կը ցուցընէ , որուն վես կ'ըլլայ եղեր Դանուբի փայ եղած պատերազմին երկար դիմանալն ու տարածուիը : Թէ որ Աւստրիոյ կառավարութեան մաքին մէջ իշխանութեանց գրաւման երեան մարդիք պատճառ սեպուած է պատերազմին , պէտք է ատկէց հետեւի որ եթէ այս գրաւմունքը

դադրելու ըլլայ , պատերազմը նոյն իսկ այդ գործով պիտի դադրի . միայն թէ թշնամութիւնները ընդհատած ըլլան : Վեհայի դահլիճը այն մտութեան վայէ է , որ այդ պապահովութիւնը առյ մեզի . թող յայտնի իմացընէ մեզի թէ ի՞նչ վստահութիւններ կընայ առաջ մեզի , և այն ատեն կայսը պատրաստ է իշխանութիւնները պարագելու ձիշդ ժամանակին վայոք դաշնագրական խօսակցութիւն ընելու . և գժուարութիւն մըն ալ չհաներ ստորագրելու ապրիլի 9ին արձանագրութեան մէջ գրուած իրեկ սկզբունքներուն . Տաճկաբանի ամբողջութիւնը . Խւխանութեանց դուրսութիւնը . Տաճկաբանի գլուխութիւնը իշխանութեան հաստատութիւնը , այս մուքով որ Դրան ամենայն գրիստոնեայ հապատակաց համար ընդունուելու քաղաքականի իրաւունքները՝ անբաժանելի են՝ իրօնական իրաւունքներ , և մեր կրօնակիցներուն համար ուժ չէին ունենար , թէ որ ատկի նոր առանձնաշնորհութիւններ ստանալու ատեն՝ իրենց հին առանձնաշնորհութիւնները չպահէին : Թէ որ բանը ասանկ ըլլալու ըլլայ , կայսէր Դռնէն ուզած պահանջ-